ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԾՁԲ-21-10/3-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 29-ը ապրիլի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և անհատ ձեռնարկատեր Արման Սվազյանն, ով գործում է որպես անհատ ձեռնարկատեր այսուհետև Կատարող, մյուս կողմից՝ երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 09.02.2021թ. կնքված № ԳՀԾՁԲ-21-10/3-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն № 1 Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը (ֆինանասական միջոցները նախատեսվել են 30.12.2020թ. ՀՀ կառավարության N 2215-Ն որոշմամբ, Ծանուցում N 7-ՊՆ 06.03.2021թ., CPV՝ 50531230/501), փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով «Գեներատորների վերանորոգման և պահպանման» ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան «Գեներատորների վերանորոգման և պահպանման)» ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություն)՝ Համաձայնագրի Հավելված N 1-ով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով և ժամկետներում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի Հավելված N 2-ով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Կատարողի մատուցելիք Ծառայության առավելագույն գինը կազմում է 13 000 000 (տասներեք միլիոն) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, այն ստորագրվելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում՝ Համաձայանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 24-ը:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը. յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3.5 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԱՐՄԱՆ ՍՎԱԶՅԱՆ» ԱՁ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք.Երևան, Խուդյակովի 17 տուն
ՀՀ ՖՆ աշխատակազմի գլխավոր հանձնակատար վարչություն	«ԱՄԵՐԻԱ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/հ 900011144079	Հ/Հ 1570035239150100
ՀԿՀՀ 02522157	ՀԿՀՀ 25390248
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ	Ա. ՍՎԱԶՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-21-10/3-1 պայմանագրին կից N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայությունների						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	անվանումը	Չափման միավորը	Քանակը	Առավելագույն գինը (ՀՀ դրամ)	Հասցե	2021թ. գնման ժամանակացույց
1	Գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայություն	դրամ	1	13 000 000	ՀՀ ՊՆ զորամասեր՝ ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության հայտերի հիման վրա:	II-IV եռամսյակներ, բայց ոչ ուշ, քան 15.12.2021թ.

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-21-10/3-1 պայմանագրին կից N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	CPV	Անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում			Ընդամենը /առավելագույն գինը/
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 24.12.2021թ.	
1	50531230/501	Գեներատորների վերանորոգման և սպասարկման ծառայություններ	4 000 000	8 000 000	13 000 000	13 000 000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՐՄԱՆ ՍԿԱՉՅԱՆ» ԱՁ

Ա. ՍԿԱՉՅԱՆ